

ԸՆԴ ԱՅՍՈՒ ՎԻՄՈՎ ՄԱՐՄԻՆՆ ԱՄՓՈՓԻ,
 ԵՐԵՄԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, /
 ՈՐ ԲԸՆԻԿ ՏԵՂԵԱԻ ԷՐ ՅՕՇԱԿԱՆՑԻ,
 ՄԻԱԲԱՆ ԳԱՀԻՍ ԵՒ ԱՅՐ ՊԻՏԱՆԻ, /
 ԶԻ ԷՐ ԳՐԱԳԻՐ ՅՈՅԺ ՎԱՐԺ ԵՒ ԱՐԻ,
ՆՐԱՐԱՐՈՒԵՍ ԾԱՂԿՕՂ ԹՂԹՈՑԸՆ ՎԵՀԻ /
 ԵՒ ՄԵԾԻ ՎԵՀԻՆ ՏԼԷՐ ՄԻՄԷՕՆԻ,
 ԷՐ ԾԱՌԱՅ ՆԱԵԻ ՕՐՀՆԱԾՆԻ ՈՐԴԻ, /
 ՈՐՈՒՄ ԳԹԱՍՑԻ ՓՐԿԻԶՆ ԱՄԵՆԻ,
 ԱՌՆԵԼՈՎ ԱՐԺԱՆ ՏԵՍՈՅՆ ԻՒՐ ԲԱՐԻ /
 ՏԱԼՈՎ ԺԱՌԱՆԳԵԼ ԸԶԿԵԱՆՄՆ ԱՆԶԿԱԼԻ
 ԵՒ ՊԱՐԱԿՑԵԼՈՎ ՍՐԲԱՆՑՆ ԳԸՆԴԻ /
 Ի ԹՎԻՆ ՈՄԼ. (1781), Ի ՅՈՒՆԻՄԻ ԻԳ. (23):

Տապանագրից պարզվում է, որ Երեմիան իր ժամանակի նշանավոր գրագիր-նոտարներից էր, ով աչքի է ընկել նաև «**ծաղկողական» արվեստում** և արժանացել Ամենայն Հայոց կաթողիկոսներ Սիմեոն Ա. Երևանցու (1763–1780) և Ղուկաս Ա. Կարսեցու (1781–1799) (թեպետ վերջինիս անունը տապանագրում չի հիշվում) թղթերը, հավանաբար՝ կոնդակները, նամակներն ու տարաբնույթ գրագրությունները գրելու, նաև նկարազարդելու պատվին:



Նկ. 1 Գրիչ, ծաղկող Երեմիա Օշականցու տապանաքարը, 1781 թ.

Երեմիա Օշականցին այն եզակի նկարազարդող-ծաղկող հոգևորականներից է, որի՝ հիշյալ մասնագիտությանը տիրապետելու մասին վկայում է նաև նրա տապանագիրը:

2. Մատենագրական վաստակը

Երեմիա Օշականցու մասին մեզ հասած տեղեկությունները հիմնականում իր իսկ ձեռագրերի հիշատակարաններից են, որոնցից դատելով՝ նա ձեռագրեր է ընդօրինակել ու ծաղկել դեռևս իր սարկավագության

1 Տապանագիրը հիշատակվում է Գևորգյան հոգևոր ձեմարանի սան Արարատ սարկավագ Գափոյանի (Տեր Ղևոնդ) ավարտաձառում՝ առանց որևէ ծանոթագրության, տես **Արարատ սարկավագ Գափոյան**, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն, Ս. Էջմիածին, 1998, էջ 101:

տարիներին: Օրինակ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) 1757 թվականից հետո էջմիածնում գրված «Յակոբայ Շամախեցոյ հաց նեղաւորաց և գոհարան»² Շմ 10677 ձեռագրի հիշատակարանում նշվում է. «...նաև զիս՝ ըզԵրեմիաս զսարկաւագս հանձարապակասս, որ գրեցի և ծաղկեցի զայս ...»³: Մատենադարանի մեկ այլ՝ դարձյալ էջմիածնում 1760-1761 թթ. գրված Շմ 2646 «Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Հայոց» ձեռագրի ծաղկողը ևս Երեմիա սարկավագն է. «Եւ ես խնդրեմ ի ձէնջ յիշել ի Քրիստոս զթարմատար և զբազմամեղ, զգանապարտական և զպատժապարտ, զպարսաւապատեհ ծառայս նորին և ձեր ամենեցուն զդպիրս Ղուսկիանոս զտաժանմամբ զծօղս սորա և մանաւանդ զծաղկօղս սորին զԵրեմիաս սարկաւագս՝ զհարազատ պաշտօնեայս սոյն մեծի հայրապետիս...»³: Վերոնշյալ հիշատակարանները վկայում են, որ դեռևս երիտասարդ հասակից Երեմիան ունեցել է նկարչական բարձր ձաշակ ու հմտորեն տիրապետել հիշյալ մասնագիտությանը:

Հայ մանրանկարիչների մատենագիտական ցանկում արվեստաբան **Ա. Գևորգյանը** հիշատակում է Երեմիա Օշականցուն, որը ստեղծագործել է 18-րդ դ. երկրորդ կեսին և Սիմեոն Երևանցու պատվերով ձեռագրեր նկարագարողել էջմիածնում: Հայ մանրանկարչական արվեստն ըստ **Ա. Գևորգյանի՝** շուրջ տասնչորս հարյուրամյակի (6-19-րդ դդ.) պատմություն ունի և «...իր ոճական առանձնայատկութիւնների, գեղարուեստական բարձր մակարդակի, ընդգրկած թեմաների և դրանք ստեղծող տաղանդաւոր նկարիչների շնորհիվ, այսօր համաշխարհային ձանաչման է արժանացել ու գիտական բազմաթիւ ուսումնասիրութիւնների նիւթ դարձել»⁴:

Մաշտոցյան Մատենադարանում են պահվում Երեմիայի նկարագարած երկու ձեռագիր՝ «Մաշտոց ձեռնադրութեան» (ՄՄ Շմ 2891, 2892), որոնց գրիչը Եփրեմ վարդապետն է՝ հետագայում Եփրեմ Ա. Չորագեղցի (1809-1830) կաթողիկոսը: Ըստ ՄՄ Շմ 2891 ձեռագրի գրչության ծավալուն հիշատակարանի՝ վերջինս «նոտարական արհեստին» տիրապետելու համար պարտական է Երեմիային. «...քանզի ի նմանէ ունիմ ուսեալ զգիրս, որ մեծաւ երկամբ և աշխատութեամբ ուսոյց ինձ զարհեստս նօտարութեան, որում Տէր լիցի վարձահատոյց»⁵: Եփրեմ վարդապետը Երեմիային իբրև ուսուցիչ է բնորոշում նաև հիշատակարանի վերջում. «Յիշեսչիք և զծաղկօղ սորին և ուսուցիչն ինձ զարհեստս նօտարութեան զԵրեմիա արքեպիսկոպոսն վերոյ յիշեցեալ, հանդերձ ծնողօք իւրովք»⁶:

Մատենադարանում պահվող ևս չորս ձեռագրի (ՄՄ Շմ 1056, 1817, 2646, 10677) գրիչ և ծաղկող Երեմիային **Ա. Գևորգյանը** պայմանականորեն նույնացնում է Երեմիա Օշականցու հետ, քանի որ Երեմիա գրիչը ևս

2 Տե՛ս **Ա. Գևորգեան**, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն. IX-XIX դդ., Եր., 1997, էջ 180:

3 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ը., խմբագրութեամբ **Գ. Տէր-Վարդանեանի**, Եր., 2013, էջ 919:

4 Տե՛ս **Ա. Գևորգեան**, Հայ մանրանկարիչներ., էջ 5:

5 Նույն տեղում, էջ 182:

6 ՄՄ ձեռ. Շմ 2891, էջ 76բ:

գործել է 18-րդ դ. երկրորդ կեսին և ձեռագրեր ընդօրինակել Էջմիածնում⁷։ **Կարծում ենք՝ հիշյալ ձեռագրերի մանրանկարչության համադրությունն իսկապես հաստատում է Ա. Գևորգյանի տեսակետը**։ Նպատակ չունենալով խորանալ արվեստաբանական հարցերի քննության մեջ՝ գտնում ենք, որ դրանք աչքի են ընկնում նկարազարդման մանրամասների՝ կիսախորանների, ձակատազարդերի, լուսանցազարդերի (բուսական, թռչնային, սափոր), վերջնազարդերի (ծաղկային), զարդագրերի (թռչնագիր, կենդանագիր) բազում ընդհանրություններով։ Առանձնանշելի են հատկապես ՄՄ Հ^տ 2891 և ՄՄ Հ^տ 2892 ձեռագրերի գրադաշտի խորանակերպ զարդանկարներով սյունակները։ Գունազարդման տեխնիկան ևս նմանօրինակ է. Երեմիա ծաղկողն առատորեն օգտագործում է ոսկի, գույներից գերակշռող են վառ կարմիրը, ծիրանին, կապույտը, կանաչը⁸ (նկ. 2-11)։

Վերոնշյալ ձեռագրերի հիշատակարանները հաճախ բովանդակալից են. դրանցում մանրամասն տեղեկություններ են հաղորդվում գրչության շարժառիթների ու նպատակի, գունազարդման տեխնիկայի, ոսկու օգտագործման և այլ հարցերի վերաբերյալ։ Հիշատակարաններում բազմիցս հանդիպում են Երեմիային ուղղված «գծող», «գրագիր», «նրբարուեստ նկարակերտ», «գեղեցկագիր նօտար», «գրիչ», «ծաղկող», «խորհրդական դպիր» և այլ նմանատիպ բնորոշումներ, որը, ինչպես վերը նշեցինք, արտահայտված էր նաև տապանագրում։ Օրինակ՝ վերոնշյալ ՄՄ Հ^տ 2891 ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ջոր տեսանելով շնորհընկալ և օրհնածին որդւոյ սոյնոյ տեսա՛նս մերոյ սրբազնկատար վեհապետի տեսա՛ն Երեմիայի արքեպիսկոպոսի յՕշականցւոյ, քաջ քարտուղարի և գեղեցկագիր նօտարի Աստուածաէջ սրբոյ գահիս և նրբարուեստ նկարակերտի, շարժեցաւ և նա ի յիղձ բարի երփնազարդել զսոսա գեղեցկագոյն ծաղկօք և ձագագրօք, և յագնիւ և ի զանազան երանգոց, և ի մաքուր ոսկւոյ...»⁹։ Այս բավականին ուշագրավ հիշատակարանը փաստացի տեղեկություններ է հաղորդում Երեմիայի՝ Մայր Աթոռում գրաղեցրած պաշտոնների ու նկարազարդման նյութերի վերաբերյալ։ Նա հիշվում է ոչ միայն իբրև «քաջ քարտուղար» և «գեղեցկագիր նօտար», այլև «նրբարուեստ նկարակերտ», որը զանազան գեղեցիկ գունային երանգներով ու մաքուր ոսկով նկարազարդել-ծաղկել է ձեռագիրը։ Ի դեպ, ուշագրավ է նաև Մայր տաճարի՝ «Աստուածաէջ սրբոյ գահ» ձևով հիշատակումը։

1767-1768 թթ. Էջմիածնում գրված ՄՄ Հ^տ 2 «Պետրոս Աղամալեան-Բերդումեան. Աղբիւր բացեալ» ձեռագրի ստացողը նույն ինքը Երեմիա եպիսկոպոս Օշականցին է, իսկ գրիչը՝ Մայր Աթոռի նշանավոր նոտար Ղուկկիանոս Աշտարակեցին. վերջինս և իր մայրը թաղված են Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում։ Ձեռագրի Հայոց ՌՄԺԷ. (1768) թվակիր ծավալուն և բավականին խոսուն ստացողի հիշատակարանը,

7 Տե՛ս Ա. Գևորգեան, Հայ մանրանկարիչներ, էջ 181:
 8 Մանրանկարները համեմատելու նպատակով վերոնշյալ ձեռագրերը մեզ տրամադրեց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանը. հայտնում ենք մեր շնորհակալությունը:
 9 Ա. Գևորգեան, Հայ մանրանկարիչներ, էջ 182:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2 (ժԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒՄԻ-ՄԱԿՐԱՆԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿԱԿԱՎԱՆ ԽԱՆՈՒՆ

որ, ըստ ամենայնի, Երեմիայի ինքնագիրն է, ամփոփում է տեղեկություններ նրա ծննդավայրի, ձեռագրի պատվիրման շարժառիթների, աշխատանքի, զբաղվածության և այլևայլ հարցերի վերաբերյալ: Նա հայտնում է, որ իր իղձն ու ցանկությունն էր ամբողջական ունենալ Ավետարանի առակների մեկնությունները, որի համար խնդրանքով դիմել է ժամանակի նշանավոր աստվածաբան, փիլիսոփա, Ս. Էջմիածնի միաբան Պետրոս եպիսկոպոս Նախիջևանցուն¹⁰, որը և ընդառաջել է նրան: Սակայն աշխատանքի ծանրաբեռնվածությունը թույլ չի տվել, որ Երեմիան անձամբ գրեր իր մատյանը, որի մասին հաղորդում է հետևյալը. «Ձոր և յետ յաւարտ և ի կատարումն հասուցանելոյն, շնորհեաց ինձ՝ ամենանուաստ Երեմիա յոգնամեղ եպիսկոպոսիս, հաւատով և սիրով խնդրողիս և փափագողիս սոյնոյ աստուածային յորդառատ և զովացուցիչ աղբեր: Եւ ես, ի նոյնոյ հեղինակէն, երկրորդաբար գրեցուցի զսա արդար վաստակօք իմովք այլոյ ումեմն եղբօր, վասնզի ես չունէի ժամ գրելոյ՝ **վասն նօտարական և ծաղկարարական գործոյս իմոյ ծանրութեան և մշտաշխատութեան**, որպէս զի որքան կենդանիս եմ՝ վայելիցեմ զսա և յետ մահուան իմոյ լիցի անջնջելի յիշատակ հոգւոյ իմոյ և ի վայելս տիրացու Զաքարիայ եղբօրորդոյն իմոյ»¹¹: Հիշատակարանից պարզվում է, որ դյուրին չի եղել Երեմիա Օշականցու աշխատանքը, նոտարական ու ծաղկարարական զբաղմունքն այնքան մեծ ժամանակ է պահանջել նրանից, որ չի կարողացել անգամ իր համար ցանկալի ու երկար սպասված գործն անձամբ գրել:

3. Երեմիա Օշականցին տպագիր աշխատություններում

Երեմիա Օշականցին՝ իբրև արհեստավարժ ծաղկող, քանիցս հիշատակվում է **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի և Գյուտ ավագ քահանա Աղանյանցի** աշխատություններում: Վերջինս Երեմիային բնորոշում է իբրև «սիրուն գեղագիր», «ընտիր քարտուղար», «նրբարուեստ նկարող և ծաղկագրող». «Այս Երեմիան մի շատ սիրուն գեղագիր էր, ընտիր քարտուղար, նրբարուեստ նկարող և ծաղկագրող զանազան գոյներով և մաքուր ոսկով»¹²: Ս. Էջմիածնի նվիրակության թեմերի ցանկը ներկայացնելիս **Գյուտ Աղանյանցը** հիշատակում է կազմողին՝ նոտար Երեմիա Օշականցուն, որը «Սիմէոն կաթողիկոսի նախապատիւ

10 18-րդ դարում ապրած ու գործած Պետրոս եպիսկոպոս Նախիջևանցին կամ Բերդումյան-Աղանայանը ժամանակի բազմարդյուն, շնորհաշատ հոգևորականներից է, որը թողել է մատենագրական հարուստ ժառանգություն: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավելի քան 160 ձեռագիր պարունակում է նրա շուրջ 20 անուն գործերը. դրանք հիմնականում ունեն աստվածաբանական, մեկնողական, փիլիսոփայական բնույթ: Կյանքից հեռացել է 1787 թ. և թաղված է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Պետրոս Նախիջևանցու կյանքն ու մատենագրական վաստակը նախորդ ուսումնասիրողների նյութերի հիման վրա առավել հանգամանորեն ներկայացրել է Միքայել վրդ. Աջապահյան, տե՛ս **Միքայել վրդ. Աջապահյան**, Պետրոս արք. Բերդումյան. Կյանք և մատենագրական վաստակ, «Էջմիածին», 1991, է-Ը, էջ 33-48:

11 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ա., կազմեցին՝ **Օ. Եգանյան, Ա. Անյունյան, Փ. Անթաքյան**, Եր., 1984, էջ 12:

12 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ., Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատ. **Գիւտ քահանայ Աղանանց**, Թիֆլիս, 1894, էջ 797:

սպասաւոր, Մկրտիչ արքեպիսկոպոսի սանիկն էր և վերջը հասաւ արքեպիսկոպոսութեան աստիճանին»¹³: Վերջին տեղեկությունը կարևորվում է այնքանով, որքանով որ պարզում է Երեմիայի՝ Սիմեոն կաթողիկոսի սպասավորներից Մկրտչի սանիկը լինելու հանգամանքը: Նշենք, որ Մկրտիչը վախճանվել է 1789 թ. հուլիսի 8-ին և թաղված է Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում: Օրորոցաձև տապանաքարի հնգատող վիմագրում նա դարձյալ հիշվում է իբրև Սիմեոն վեհի մեծ պաշտոնյա: Ս. Հռիփսիմե վանքի հյուսիսարևմտյան հին պարիսպն իր բուրգերով ու կամարակապ դարպասով կառուցվել է վերջինիս միջոցներով՝ 1776 թ., որի մասին է վկայում դարպասի արևելահայաց որմին ազուցված քարի շինարարական արձանագրությունը. «...շինեցաւ արտաքին պարիսպ Սևր Լբուկ վանիցս, հանդերձ երկու բրքովքն, և կամարակապ դրամբս՝ արդեամբք Տեառնն Սիմէօնի սրբաւազման կլաւթուղիկկուկուսի սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոսին...»¹⁴:

Երեմիա Օշականցու կազմած «Ս. Էջմիածնի նուիրակութեանց թէմերը» մատյանի վերջում առկա է ծավալուն հիշատակարան, որը հրատարակել է **Գ. Աղանյանը**: Ըստ հիշատակարանի՝ Սիմեոն կաթողիկոսի բաղձանքն էր կազմել մատյաններ ու ցուցակներ, որոնցում պետք է արձանագրվեին. «...թեմք և վիճակք սրբոյ Աթոռոյս. թէ որք նուիրակացն սորին էին շրջագայելիք և թէ որք առաջնորդացն ի Հայրապետաց սորին կարգելոց հովուելիք»¹⁵: Հայրապետի՝ միանգամայն մեծ կարևորություն ունեցող նախաձեռնությունն իրականացվում է Երեմիա նոտարի ձեռքով: Ավելորդ չենք համարում այստեղ ևս մի հատված մեջբերել հիշատակարանից. «Ես՝ նուաստագունեղ ծառայս նորին և ձերունդ ազնութեան Երեմիա արեղայս՝ նօտարս սրբոյ գահիս, հաւաստի տեղեկութեամբ, անթերութեամբ և ուղիղ դասութեամբ ժողովեցի ի մի վայր զընդհանուր թեմս և զվիճակս սրբոյ Աթոռոյս. զքաղաքս, զղասապայս, և զգլխաւոր գիւղօրայս նոցին յիրաքանչիրունն դասու: Զի ես յիմում ժամանակի և յետագայքն իմ յիրաքանչիր դարս անաշխատ գտցուք և գրեցուք: ...Ուստի և տեառն իմոյ սրբազանի կատարեցան բարի կամք, որ ի վաղուց կամէր այսմ այսպէս լինել... Գրեցաւ ի ՌՄԺԴ. (1765), յունիսի ԺԸ. (18)»¹⁶: Այսինքն՝ հիշյալ թվականից սկսած և հետագա տարիներին ևս պետք է շարունակաբար լրացվեին, կազմվեին ու ամբողջացվեին Մայր Աթոռի վերոնշյալ ցուցակներն ու գրանցման մատյանները:

Սիմեոն կաթողիկոսի՝ հիշյալ նախաձեռնությունների վերաբերյալ, ինչպես նաև դրանց իրագործումը Երեմիա նոտարին վստահելու առնչությամբ տեղեկություններ է հաղորդում նաև **Մ. Օրմանյանը**: Ըստ նրա՝ Սիմեոն Երևանցու ձեռնարկումները. «...կը ծառայեն թէ գործունէութեանց կանոնաւորութիւն տալու, և թէ եղելութեանց նպատակն ու յիշատակը

13 Նույն տեղում:

14 **Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ **Ա. Տեր-Ստեփանյանի**, Ս. Էջմիածին, 2014, էջ 187: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Արարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 241: Վիմակն տարեգիր, կազմեաց **Կ. Կոստանեանց**, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 213:

15 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ., էջ 805:

16 Նույն տեղում, էջ 806:

պահպանելու»¹⁷: Նա նաև շեշտում է, որ վեհափառ հայրապետը «...նու-
իրակութեանց մասին տեղեկութիւններ հաւաքելու գործը յանձնեց Երե-
միա նոտարին, որ նշանակէ իւրաքանչիւր թեմին նուիրակը, անոր արդի-
նաւորութիւնը և զանազան խնդիրները»¹⁸: Այսօրինակ վկայությունները
փաստում են Երեմիայի՝ Մայր Աթոռում զբաղեցրած բարձր դիրքը, կաթո-
ղիկոսից վստահություն, հարգանք ու սեր վայելելը, ինչպես նաև իր գոր-
ծում հմուտ, գիտակ ու աշխատասեր լինելը:

Երեմիա Օշականցին քանիցս հիշատակվում է նաև ձեռնադրություն-
ների ցուցակներում: Այս առումով կարևորվում է հատկապես ՄՄ Հ^ր 2
«Աղբիւր բացեալ» ձեռագրի վերոնշյալ հիշատակարանի վերջնամասը,
ուր թվագրմանը զուգահեռ նշվում է. «Արդ գրեցաւ աստուածային բու-
րաստանս ի թուականիս մերում ՌՄԺԷ. (1768), ի վեցերորդում ամի հայ-
րապետութեան վեհափառ տեսա՞ն մերոյ Սիմէօն սրբազան կաթողիկո-
սին, յորմէ ընկալեալ եմ զերիս հոգևոր շնորիս, այսինքն՝ զքահանայութիւն,
զվարդապետութիւն և զեպիսկոպոսութիւն...»¹⁹: Հիշատակարանում հե-
ղինակը, այսինքն՝ Երեմիա Օշականցին, հստակ մատնանշում է, որ իր
երեք հոգևոր աստիճանները, որ են՝ քահանայություն, վարդապետություն
և եպիսկոպոսություն, ստացել է Սիմեոն Երևանցի սրբազան հայրապե-
տից:

Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարան»-ի ձեռնադրությունների ցու-
ցակում պահպանված մի ուշագրավ վկայության համաձայն՝ 1767 թ. Մայր
Աթոռի միաբաններից մի քանիսի հետ եպիսկոպոսության աստիճան է
շնորհվել նաև գրագիր Երեմիա Օշականցուն. «Ի ՌՄԺԶ. (1767) թուոշս.
մետասաներորդ ձեռնադրեաց եպիսկոպոս, զմիաբանսն սրբոյ Աթոռոյս,
զԵղվարդեցի լուսարար Գրիգոր վարդ.²⁰, զԿարբեցի Սարգիս վարդ.,
զԱռնձեցի Յուսէփ վարդ., զՅօշականցի գրագիր Երեմիայ վարդ. ... ի
փետրվարի ԺԱ. (11)»²¹: Հիշատակություններից մեկն էլ, որ ըստ էության
նույնանում է նախորդի հետ, կապված է Հնդկաց երկրի նվիրակ Հով-
հաննես վարդապետի փոխարեն նույն պաշտոնում նշանակված Սիմեոն
կաթողիկոսի սպասավոր Հովսեփ վարդապետի հետ: Քանի որ վերջինս
եպիսկոպոս չէր, ուստի կաթողիկոսը «...ի ԺԱ. (11) աւուր փետրվ[ար]
ամսոյն և ի բարեկենդանի միջի կիրակէին, որ զկնի տօնի սրբոյ Հայրա-
պետին Իսահակայ, ձեռնադրեաց զնա եպիսկոպոս: Ընդ որում ձեռնա-
դրեաց ևս ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս զԵղվարդեցի Գրիգոր (որ էր
լուսարար սրբոյ գահիս). զԿարբեցի Սարգիս և զԺամասած Ստեփաննոս
և զՅօշականցի Երեմիայ վարդապետսն, որ գրագիր էր սրբոյ Աթոռոյս»²²:

17 **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հատ. Բ., Եր., 2001, էջ 3499-3500:

18 Նույն տեղում, էջ 3500:

19 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ա., էջ 13-14:
20 Կարծում ենք՝ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում թաղված երբեմնի լուսա-
րար Գրիգոր եպիսկոպոս Եղվարդեցին է, որը վախճանվել է 1787 թ.: 1771 թ. նրա «աշխա-
տասիրութեամբ» և վարպետ Գասպարի գլխավորությամբ վերանորոգվել են Մայր տաճարի
և երկու խորանների տանիքը, հարավային զույգ սյուները, ինչի մասին է վկայում տաճարի
արևելյան փոքր զանգակատան ներսում ագուցված քարի 6 տողանի վիմագիրը:

21 Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ. Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, մասն III.
վերջին, հրատ. **Գիւտ Աղանեանց ա. քահ.**, Թիֆլիս, 1913, էջ 456:

22 Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ., էջ 642-643:

Գրագիր, ծաղկող Երեմիա Օշականցին և վերոհիշյալ Ղունկիանոս գրիչն, ըստ ամենայնի, հիշատակվում են նաև Հակոբ Շամախեցու (Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1759–1763) «Գիրք աղօթից, որ կոչի հաց նեղելոց» տպագիր աշխատության «Աղերս յիշատակի գծագրողացն գրքոյս» բաժնում: Հիշման ու աղերսի տողերն այսպես են եզրափակվում. «Այլ և աղաչեմք յիշել վերջաբար. գերկոսին եղբարս՝ զնօտարս անկատար: ըգԵրեմիաս և գՂունկիանոսս. զնախագրրիչս տառիս փրրկարար: Ջի գմեզ յիշելով և դուք յիշիջիք. յամենատեառնէն և զվարձս ընկալջիք... Իսկ թիւրն մեր յոր այսք աւարտեցան. հագար երկերիւր և մի եօթնական (1758)...»²³: Ըստ էության՝ տպագիր աշխատության համար հիմք հանդիսացող ձեռագիրը Երեմիայի ու Ղունկիանոսի գրչին է պատկանել: Կարծում ենք՝ խոսքը Էջմիածնում գրված վերոնշյալ ՄՄ Հ^տ 10677 «Յակոբայ Շամախեցոյ հաց նեղաւորաց և գոհարան» ձեռագրի մասին է (չնայած նրան, որ Ա. Գևորգյանը ձեռագրի գրիչ և ծաղկող հիշատակում է միայն Երեմիային):

Ամփոփելով վերոշարադրածը՝ պետք է արձանագրել, որ 18-րդ դարի երկրորդ կեսին իր բեղուն գործունեությամբ ու բնատուր տաղանդով աչքի ընկած գրագիր, ծաղկող Երեմիա արքեպիսկոպոս Օշականցին Մայր Աթոռի միաբանության՝ տվյալ ժամանակի արդյունաշատ հոգևոր գործիչներից էր, որի ստեղծագործական ուղին նշանավորվեց ու լավագույնս դրսևորվեց հատկապես մատենագրության մեջ: Նա վախճանվել է 1781 թ. հունիսի 23-ին: Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցում գտնվող օրորոցաձև տապանաքարի արձանագրությունը պարզապես լրացնում ու վավերացնում է Երեմիա Օշականցու կյանքի ու գործունեության վերաբերյալ ցայսօր հայտնի փաստագրերը:

Արսեն Է. Հարությունյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիմագրությունը, մասնավորապես՝ Արմավիրի մարզի վիմագրական ժառանգությունը: Ավելի քան քսան գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մեծ մասը նվիրված է Հայոց հոգևոր կենտրոն Վաղարշապատի վանքերի նորահայտ արձանագրությունների ուսումնասիրությունը:

²³ Հայ գիրքը 1512–1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, [կազմեցին] Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավայան, Եր., 1988, էջ 447–448:

Summary

THE WRITER AND MINIATURIST YEREMIA OSHAKANTSI AND HIS EPITAPH

Arsen E. Harutyunyan

The writer and miniaturist of the 18th century Yeremia archbishop Oshakantsi is buried in the monastic cemetery of St. Echmiatsin. His prolific activity was particularly remarkable during the reign of the Catholicos Simeon Yerevantsi (1763–1780), as it is also evidenced by the epitaph.

Some manuscripts painted by him are kept in the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts “Matenadaran” (N 1056, 1817, 2646, 2891, 2892, 10677). These were studied by art specialist A. Gevorgyan. The miniatures of Yeremia Oshakantsi are especially distinguished by their painting peculiarities: here the bright colors and gold are predominant.

The data about Yeremia Oshakantsi is preserved in the publications of Maghakia archbishop Ormanyan and Gyut senior priest Aghanyants. The epitaph, which is represented in this article, accomplishes and verifies the existing facts about his life and manuscript activity.

Резюме

РУКОПИСЕЦ И МИНИАТЮРИСТ ЕРЕМИЯ ОШАКАНЦИ И ЕГО ЭПИТАФИЯ

Арсен Э. Арутюнян

Рукописец и миниатюрист 18-го века Еремия Ошаканци похоронен на монастырском кладбище Св. Эчмиадзина. Наиболее плодотворным периодом его деятельности было время правления католикоса Симеона Ереванци (1763–1780). Некоторые из иллюстрированных Еремией рукописей хранятся в собрании Матенадарана им. Месропа Маштоца (N 1056, 1817, 2646, 2891, 2892, 10677), исследованием которых занимался искусствовед А. Геворгян. Миниатюры архимандрита Еремии Ошаканци особенно отличает их колористика – для них характерно преобладание ярких цветов и используемое золото.

Сведения о Еремии Ошаканци сохранились также в трудах архимандрита Магакии Орманяна и протоиерея Гюта Аганянца. Рассматриваемая эпитафия подтверждает и дополняет ранее известные факты о его жизни и деятельности как автора рукописей.

ՆՄՈՒՇՆԵՐ ԵՐԵՄԻԱ ՕՇԱԿԱՆՅՈՒ
ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻՑ

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերում

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ (ԺԲ) րարի, թիվ 3 (47) հոլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՎ համահայկական հանդես



Նկ. 2. ՄՄ 2891, էջ 19ա, Էջմիածին, 1779 թ.



Նկ. 3. ՄՄ 1056, էջ 10ա, Էջմիածին, 1758 թ.



Նկ. 4. ՄՄ 1817, էջ 44ա, Էջմիածին, 1768 թ.



Նկ. 5. ՄՄ 2646, էջ 3ա, Էջմիածին, 1760-1761 թթ.



Նկ. 6. ՄՄ 10677, էջ 25ա, Էջմիածին, 18-րդ դ.



Նկ.7. ՄՄ 2891, էջ 29ա, Էջմիածին, 1779 թ.



Նկ. 8. ՄՄ 1056, էջ 23ա, 1758 թ.



Նկ. 9. ՄՄ 1056, էջ 62բ, 1758 թ.



Նկ. 10. ՄՄ 2891, էջ 17բ, 1779 թ.



Նկ. 11. ՄՄ 1056, էջ 10ա, 1758 թ.